



ՀԿԵ ՓԲԸ-ի ամսաթերթ

11 (58)

Երկաթուղային

ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2017

Հարգելի գործընկերներ.

Սրտանց շնորհավորում ենք բոլորի գալիք Ամանորն ու Սուրբ Ծնունդը: Բոլորս էլ նոր ակնկալիքներ ունենք, նոր նախագծեր ենք կառուցում, դրական փոփոխություններ ակնկալում և հաճելի ու ջերմ ակնթարթներ սպասում նոր տարում:

Հայաստանի երկաթուղու համար անցած տարին լի էր ակտիվ աշխատանքներով, այն լարված էր, բայց երկաթուղայինները կարողացան հասնել դրված նպատակներին: Իսկ որքան հաջող կլինի ՀԿԵ-ի համար հաջորդ տարին կախված է միայն մեզանից, մեր աշխատանքից:

2018 թվականը երկաթուղու համար հատկանշական է՝ այն հաջողության է՝ 10 տարի առաջ Հարավկովկասյան երկաթուղին սկսեց Հայաստանում իր աշխատանքը:

Հարգելի գործընկերներ.

Շնորհակալություն են հայտնում բարեխիղճ աշխատանքի համար: Ձեզ և ձեր ընտանիքներին սրտանց մաղթում ենք երջանկություն, առողջություն և ուրախություն: Թող այս տարին լինի ձեր բերրության և նվաճության, հաջողության, բարեկեցության և բարգավաճման տարի:



Հարգանքով՝

«ՀԿԵ» ՓԲԸ գլխավոր տնօրեն

Սերգեյ Վալկո

ՀԿԵ-ում ամփոփեցին տարվա արդյունքները



«Հարավկովկասյան երկաթուղու» ՓԲԸ գլխավոր տնօրեն Սերգեյ Վալկոն դեկտեմբերի 28-ին կայացած խորհրդակցության ընթացքում ամփոփեց տարվա արդյունքները: Ինչպես նշեց տնօրենը, տարին լի էր կարևոր իրադարձություններով: Դրանց շարքում Սերգեյ Վալկոն մասնավորապես նշեց երկաթուղա-լաստանավային փոխադրումների ակտիվացումը, Կարմիր Բլուր կայարանի էլեկտրական կենտրոնացման համակարգի վերականգնումը, նոր էլեկտրագծերի փորձարկումը, որն այժմ համապատասխանեցվում է Հայաստանի պայմաններին: Իրականացվել են նաև մի շարք բարեգործական ծրագրեր՝ վերականգնվել է 90-ամյա վետերան-երկաթուղային, Գյումրու վերականգնողական գնացքի նախկին պետ Հրաչ Հարությունյանի տունը, օժանդակություն ցուցաբերվել Ֆիդուստոլո գյուղի միջնակարգ դպրոցին:

- Այս տարի մենք աշխատում էինք ավտոտրանսպորտի հետ խիստ մրցակցության դժվար պայմաններում: Միջոցներ ենք ձեռնարկել երկաթուղի նոր բեռնահոսքերի ներգրավման ուղղությամբ: Դրական ազդեցություն են ունեցել նաև Կավկաս-Փոթի

լաստանավի աշխատանքի ակտիվացմանն ուղղված միջոցառումները, - ասաց ՀԿԵ-ի ղեկավարը՝ նշելով, որ փետրվարից դեկտեմբեր 40 ընկերություններ ավտոտրանսպորտից անցել են երկաթուղային տրանսպորտ:

Վիճակագրական տվյալների համաձայն, 2017 թվականին երկաթուղային բեռնափոխադրումների ծավալները գերազանցեցին 2,6 մլն տոննա, ինչը 0,4%-ով գերազանցում է անցած տարվա արդյունքները: Բեռնաշրջանառությունն ավելացել է 4%-ով, արտահանումը՝ 9,4% (կամ 32 հազ տն), ներմուծումը՝ 4%-ով: Գնացքի միջին քաշը աճել է 0,5%, լոկոմոտիվի միջին օրական վազը՝ 1%, իսկ արտադրողականությունը՝ 2,9%: Տեղմասային արագությունն ավելացել է 1,7%-ով, իսկ տեխնիկականը՝ 2,7%-ով:

Միևնույն ժամանակ Սերգեյ Վալկոն արձանագրեց երկաթուղու աշխատանքի մի շարք ցուցանիշների կատարելագործման անհրաժեշտությունը՝ մասնավորապես, շահագործվող էլեկտրաբարձերի պարկ, էլեկտրաէներգիայի ծախս:

Խոսելով գնացքների շարժի մասին՝ ՀԿԵ գլխավոր տնօրենը նկատեց, որ 2017-ին երկաթուղին սպասարկել է 12 835 գնացք, որից 12 686-ը՝ ըստ չվացուցակի: Նա հանձնարարեց անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել չվացուցակի պահպանման ուղղությամբ: Ընդ որում, միջազգային ուղևորափոխադրումների ծավալը տարվա արդյունքներով աճել է 12%-ով:

Ընկերության ղեկավարը հատուկ կարևորեց անվտանգության հարցը, նշելով, որ 2017 թվականին գծի գնահատականը բարելավվել է 6 կետով՝ կազմելով 81 միավոր:

«ՀԿԵ» ՓԲԸ գլխավոր տնօրենը նշեց, որ Ընկերության հաջող աշխատանքը 2018 թվականին կախված է յուրաքանչյուր երկաթուղայինից և մաղթեց առողջություն, հաջողություն, բարություն, արդյունավետ աշխատանք և երկաթուղու առջև կանգնած խնդիրների արդյունավետ լուծում:

Այնուհետև Սերգեյ Վալկոն 2017 թվականին արդյունավետ և բարեխիղճ աշխատանքի համար պարգևներ հանձնեց մի շարք երկաթուղու աշխատողներին:

«ՀԿԵ» ՓԲԸ պատվիրակությունը մասնակցեց ԱՊՀ երկրների երկաթուղային տրանսպորտի հարցերով խորհրդի նիստին

«Հարավկովկասյան երկաթուղու» ՓԲԸ պատվիրակությունը, որը գլխավորում էր ընկերության գլխավոր տնօրեն Սերգեյ Վալկոն, մասնակցել է ԱՊՀ երկրների երկաթուղային տրանսպորտի հարցերով խորհրդի 67-րդ նիստին, որն անցել էր հոկտեմբերի 19-20 Ռիգայում:

Նիստին ներկա էին Հայաստանի, Բելառուսի, Ղրղզստանի, Մոլդովայի, Ռուսաստանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի, Ուկրաինայի, Ուզբեկստանի, Ադրբեջանի երկաթուղային վարչությունների ղեկավարները, իչպես նաև ասոցացված անդամ երկրներ՝ Վրաստանի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի և Ֆինլանդիայի պատվիրակությունները:

Մասնակիցներն ամփոփեցին 66-րդ նիստի որոշումների կատարման ընթացքը, երկաթուղիների աշխատանքի, միջազգային ուղևորափոխադրումների, կոնտեյներների հաշվառման արդյունքները:

Քննարկվել և համաձայնեցվել էր երկաթուղային տրանսպորտի անխափան աշխատանքին, ուղևորա- և բեռնատար գնացքների ազատ երթևեկությանը, բեռնատար վագոնների շահագործմանն ու վերանորոգմանը, նորմատիվա-տեխնիկական փաստաթղթաշրջանառությանը վերաբերվող տասնյակից ավել հարցեր:



Վերականգնվել է «ՀԿԵ» ՓԲԸ Կարմիր Բլուր կայարանի էլեկտրական տրոնագման համակարգը

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն շարունակում է Հայաստանի երկաթուղային ենթակառուցվածքի արդիականացումն ու երկաթուղային տրանսպորտի աշխատանքում նոր ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը: Հերթական քայլը՝ Կարմիր Բլուր կայարանում էլեկտրական կենտրոնացման համակարգի վերականգնումն էր: Դեկտեմբերի 25-ին կայարանում կայացած հանդիսավոր արարողությանը մասնակցեցին ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Վահան Մարտիրոսյանը, «ՀԿԵ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Մերգեյ Վալկոն, «Ապավեն» տրանսպորտային ընկերության տնօրեն Գագիկ Աղաջանյանը, «Գեոպրոմայնինգ Գոլդ» ընկերության գլխավոր տնօրենի պաշտոնակատար Անատոլի Զուբկովը, Տրանսպորտի նախարարության ներկայացուցիչներ, երկաթուղայիններ:

Ինչպես նշեց Հարավկովկասյան երկաթուղու գլխավոր տնօրեն Մերգեյ Վալկոն, էլեկտրական կենտրոնացման համակարգը կայարանում չէր աշխատում 1995 թվականից և սկսելով իր աշխատանքը Հայաստանում՝ ՀԿԵ-ն նախաձեռնեց վերականգնման գործընթացը: Համակարգը թույլ կտա մանևրային աշխատանքներն իրականացնել կառավարման վահանակից, ինչը էապես կկրճատի նախապատրաստման գործընթացի տևողությունը, գնացքների ժամանման և մեկնման գործընթացը /30 րոպեից մինչև 3 րոպե/, իսկ գնացքների ձևավորման ժամանակը կրճատվելու է 2 ժամից մինչև 45 րոպե: Բացի այդ համակարգը լիովին ապահովում է գնացքների անվտանգ երթևեկությունը և աշխատանքի ու տեխնիկայի անվտանգության կանոնները:

- Կարմիր Բլուր կայարանը խիստ կարևոր դեր է խաղում երկաթուղու գործունեությունում, ապահովում է ՀԿԵ բեռնային աշխատանքի 20%: 2017 թվականին կայարանի բեռնման աճը կկազմի 10%՝ մինչև 360 հազար տոննա: Այդ թվում 11%-ով կավելանան պղնձի խտանյութի փոխադրումները՝ մինչև 305 հազար տոննա: Երկաթուղային բեռնափոխադրումները աճում են, չնայած այդ աճը փոքր է: Մակայն 2017 թվականի արդյունքներով երկաթուղային բեռնափոխադրումների ծավալը կլինի անցած տարվա ցուցանիշից ոչ պակաս, - ասաց ՀԿԵ-ի տնօրեն Վալկոնը:

Մերգեյ Վալկոն նախարարին և հյուրերին ներկայացրեց կայարանի և էլեկտրական կենտրոնացման համակարգի հնարավորությունները, ինչից հետո նախարարը «կանաչ լույս» բացեց բեռնատար գնացքի համար՝ ազդանշանով վերականգնված համակարգի աշխատանքի մեկնարկը:

Էլեկտրական կենտրոնացման համակարգի վերականգնման աշխատանքները իրականացվել են 3 փուլերով՝

Առաջին փուլում համակարգին են միացվել 9 կմ-Կարմիր Բլուր ուղղությունում գործող սլաքային փոխադրիչները, ինչը թույլ էր տվել արագացնել գնացքների ժամանումն ու մեկնումը: Աշխատանքներն ավարտվեցին 2010 թվականին:

Երկրորդ փուլում, որն անցել էր 2015-2016 թթ, կայարանում արագացվել են բեռնման և բեռնաթափման ժամանակ իրականացվող մանևրային աշխատանքները:

2017 թվականին իրականացված երրորդ փուլում կազմակերպվել են 4 գծերի և 18 սլաքային փոխադրիչների ընդհանուր էլեկտրահամակարգին միացման աշխատանքները, ինչը թույլ է տալիս բարձրացնել գնացքների երթևեկության և կայարանում մանևրային աշխատանքի անվտանգությունը, արագացնել փոխադրումների գործընթացը, գնացքների ընդունման, մեկնման և ձևավորման գործառնությունները:

Կարմիր Բլուր կայարանը կառուցվել է շահագործման էր հանձնվել 1968 թվականին: Այն սպասարկում էր Երևան քաղաքում գտնվող խոշոր արդյունաբերական գործարանները, օրինակ՝ Հայէլեկտրոմաշը, Հայգիթոկառուցումը, Մետրոտոյը, Արփա-Մուսը, հանրապետական առևտրային հանգույցները, Զվարթնոց օդանավակայանը:

Կարմիր Բլուր կայարանը բեռնային կայարան է, որը իրականացնում է բեռնային և կոմերցիոն գործառնություններ: Ունի 7 կայարանային գիծ: Այստեղ են գտնվում «Ապավեն» և «Տրանս Ալյանս» տրանսպորտային ընկերությունների կոնտեյներային մաքսային տերմինալները, համագործակցելով որոնց հետ «ՀԿԵ» ՓԲԸ-ն իրականացնում է մուլտիմոդալ փոխադրումներ արտահանման և ներմուծման հաղորդակցություններում:

Կայարանին են միանում Հայաստանում աշխատող ձեռնարկությունների 23 երկաթուղային գծեր և երկաթուղին իրականացնում է բեռնման ու բեռնաթափման աշխատանքներ: Նման ընկերությունների շարքում են մասնավորապես Ապավենը, Տրանս Ալյանսը, Զվարթնոց միջազգային օդանավակայանը, Մի Փի Էս Օյլը:

Կայարանի միջին ամսական վազոնաշրջանառությունը կազմում է 2 200 վազոն: Կայարանի հետ աշխատող հիմնական ընկերություններն են՝

«Ապավեն» ՍՊԸ՝ ընդհանուր բեռնային աշխատանքի 63% և կոնտեյներային փոխադրումների 90%,

«Մի Փի Էս Օյլ» ՍՊԸ՝ ընդհանուր բեռնային աշխատանքի 11%,

«Տրանս Լոջիստիկ» ՍՊԸ՝ ընդհանուր բեռնային աշխատանքի 7%,

«Արմենիա Միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ՝ ընդհանուր բեռնային աշխատանքի 5%,

«Տրանս Ալյանս» ՍՊԸ՝ բեռնային աշխատանքի 5% և կոնտեյներային փոխադրումների 10%:

ՀԿԵ-ն զարգացնում է համագործակցությունը բեռնափոխակազմակերպությունների հետ

Վերջերս Մինսկ այցելած «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ պատվիրակությունը, որը գլխավորում էր ընկերության գլխավոր տնօրեն Մերգեյ Վալկոն, համագործակցության մասին հուշագրեր էր ստորագրել «Բելառուսական երկաթուղի» ընկերության և մի շարք տեղական գործարանների հետ:

Հայաստանի երկաթուղայինների պատվիրակությունը երկրորդ հանդիպումներ ունեցավ Բելառուսի ձեռնարկատերերի հետ, այցելեց երկրի խոշոր ընկերություններ, մասնավորապես Մինսկի տրակտորների գործարան, ԲԵԼԱՋ, Բորիսովի կոճերի գործարան, Մոգիլյովի մետաղագործական գործարան, Բելառուսի մետաղագործական գործարան, Մինսկի քարշակների գործարան, Մոստոլորն (Բելառուսական անտառային ընկերություն):

ՀԿԵ-ի պատվիրակները ներկայացրեցին ընկերության գործունեությունը, բեռնափոխադրումների ոլորտում առաջարկվող ծառայությունները և դրանց գնային ու լոգիստիկ առավելությունները, ինչպես նաև երկու հեռանկարային տրանսպորտային նախագծեր՝ ՀԿԵ-ի ենթակառուցվածքի հիման վրա Իրանից Եվրոպա և հակառակ ուղղությամբ մուլտիմոդալ բեռնափոխադրումներ և երկաթուղա-լաստանավային բեռնափոխադրումներ Կավկասյան կապիտալ-Փոթի:

Բելառուսական ընկերություններին հատկապես հետաքրքրեց Հարավկովկասյան երկաթուղու նոր ծառայությունը՝ երկաթուղա-լաստանավային բեռնափոխադրումները դեպի Հայաստան, Վրաստան և Իրան:

ԲԵԼԱՋ ընկերության հետ քննարկվել է ՀԿԵ-ի Գյումրու երկաթուղային հանգույցում Հայաստանում շահագործվող գործարանի արտադրության ավտոմոբիլային տեխնիկայի տեխնապատրաստման և վերանորոգման հնարավորությունը:

Բորիսովի կոճերի գործարանի հետ ձեռք բերված պայմանավորվածությունների հիման վրա արդեն իրականացվում են բեռնափոխադրումներ ոչ միայն Հայաստան, այլև Վրաստան:

Ավարտվեցին ՅՈՒՆԵՍԿՈՒՆԻ նոր էլեկտրագնացքի փորձարկումները



«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն հայտնում է, որ նոյեմբերի 23-ին ավարտվել են Հայաստանի պայմաններում «Տրանսմաշտրոինգ» ռուսական մեքենաշինական գործարանի արտադրության ՅՈՒՆԵՍԿՈՒՆԻ նոր էլեկտրագնացքի թեստային փորձարկումները, որոնք անցել են երկաթուղու բոլոր հատվածներում, այդ թվում բարձր լեռնային: Աշխատանքներին մասնակցում էին արտադրող գործարանի, «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ մասնագետները:

Զուգահեռ անցել է նաև Հարավկովկասյան երկաթուղու մեքենավարների ուսուցումը, ովքեր ապագայում շահագործելու են նոր էլեկտրագնացքը:

Փորձարկումների ժամանակ բացահայտվել են մի շարք չափանիշներ, որոնք պետք է համապատասխանության բերվեն բարձր լեռնային հայկական երկաթուղային ենթակառուցվածքի պայմաններին և տեխնիկական առանձնահատկություններին:

Քննարկվում է Տրանսմաշտրոինգի մասնագետների կողմից տեղում կամ անհրաժեշտության դեպքում արտադրող գործարանում էլեկտրագնացքի լրամշակման հարցը, ինչից հետո այն շահագործման է հանձնվելու:

Վերականգնվել է 90-ամյա վետերան-երկաթուղային Հրաչ Հարությունյանի տունը



«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն ավարտել է երկաթուղում 64 տարի աշխատած, Գյումրու վերականգնողական գնացքի նախկին պետ, Պատվավոր երկաթուղային, աշխատանքի վետերան 90-ամյա Հրաչ Հարությունյանի տան վերանորոգումը:

Ընկերության մասնագետների կողմից կառուցվել է գազամատակարարման գիծը, տեղադրվել ջեռուցման համակարգը, վերանորոգվել տանիքը, բարեկարգվել տարածքը:

Կատարված աշխատանքների որակը ստուգեց «ՀԿԵ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Սերգեյ Վալկոն, ով շնորհավորեց վետերանին և նրա ընտանիքին՝ մաղթելով երջանկություն, առողջություն և բարեկեցություն վերանորոգված տանը: Վետերանին նաև նվիրեցին խոհանոցային վառարան:

Ընկերության ղեկավարը մի շարք հանձնարարականներ տվեց տան հետագա բակերարգման ուղղությամբ: Իսկ վետերանի դուստրը շնորհակալություն հայտնեց ՀԿԵ-ին ցուցաբերված աջակցության համար՝ նշելով, որ ընկերության օգնությունը թույլ տվեց իրենց ընտանիքին վերամիավորվել և շուտով այստեղ կտեղափոխվի նաև Հարությունյանի թոռնուհին:

Սա ՀԿԵ-ի կողմից ցուցաբերված աջակցության առաջին դեպքը չէ: Ընկերությունը սիստեմատիկ աշխատում է այս ոլորտում՝ իր վրա վերցնելով վետերան-երկաթուղայինների աջակցությունը և տների վերանորոգման պարտականությունը: Վերջին երեք տարիների ընթացքում վերանորոգվել են Գյումրիում և Կոտայքի մարզի Սուլակ գյուղում գտնվող տները:

«Ի՞նչ: Որտե՞ղ: Ե՞րբ» խաղի ՀԿԵ-ի կորպորատիվ առաջնությունում հաղթեց Շարժակազմի տնօրինության թիմը

Դեկտեմբերի 27-ին կայացել է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ «Ի՞նչ: Որտե՞ղ: Ե՞րբ» խաղի ավանդական կորպորատիվ առաջնությունը, որը կազմակերպել էր ՀԿԵ Երիտասարդական խորհուրդը:

Առաջնությանը մասնակցեցին Ընկերության տարբեր տնօրինություններ, ծառայություններ, ստորաբաժանուհիներ և ձեռնարկություններ ներկայացնող 8 թիմեր:

Իսկ հաղթանակը տոնեց Շարժակազմի տնօրինության թիմը: Երկրորդ տեղը զբաղեցրեց Փոխադրուհիների տնօրինությունը ներկայացնող թիմը, երրորդը՝ Միջազգային կապերի և վարչական մարմինների հետ փոխգործակցության բաժնի թիմը:

Հաղթողներին շնորհավորեց և պարգևատրեց ընկերության գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Օլեգ Շատալովը:

Առաջնությունը կազմակերպվում է ամեն տարի՝ ՀԿԵ երիտասարդության ակտիվությունը խրախուսելու, երիտասարդների մոտ կորպորատիվ ոգու և արժեքներ ձևավորելու, երիտասարդների անձնական և մասնագիտական ներուժը զարգացնելու նպատակով:



Աշխատանքի արդյունքներն ամփոփեցին ՀԿԵ Անվտանգության Ծառայությունում



Դեկտեմբերի 27-ին կայացած ավանդական նախատնական ստուգատեսի ընթացքում ամփոփվել են «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ անվտանգության ծառայության աշխատանքի արդյունքները: Աշխատակիցներին ողջունեցին և շնորհավորեցին «ՀԿԵ» ՓԲԸ գլխավոր տնօրենի անվտանգության գծով տեղակալ Արմեն Դարբինյանը և Անվտանգության ծառայության պետ Արթուր Դավիթալյանը:

Միջոցառման ընթացքում ծառայության մի շարք աշխատակիցներին շնորհվեցին պատվոգրեր և շնորհակալագրեր:

Տարվա ընթացքում ՀԿԵ Անվտանգության ծառայությունն ապահովում էր երկաթուղային ենթակառուցվածքի պաշտպանությունը, կատարվում էր անհրաժեշտ հսկողությունը, տարվում էր աշխատողների ուսուցման և վերապատրաստման ուղղությամբ աշխատանքներ:

Ուշադրության կենտրոնում էին հնարավոր ահաբեկչությունների դեմ ուղղված աշխատանքները, մշտապես դիտարկվում էր «ՀԿԵ» ՓԲԸ պահպանվող օբյեկտներում տիրող օպերատիվ իրավիճակը: Այս ոլորտում ՀԿԵ Անվտանգության ծառայությունը համագործակցում է Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների հետ:

Խուլ խաչմերուկ

Վերջերս «Ժամանակ» թերթում և Առաջին լրատվականում հրատարակված հոդվածները բոլորովին էլ չեն դասվում ընդդիմադիր մամուլի սենսացիոն հրատարակումների շարքին: Փառք Աստոն, մենք ունենք ընդդիմադիր մամուլ, որի թվին պատկանում են նաև նշված թերթն ու կայքը: Մեր ուշադրության արժանացած հրատարակումներ նման հոդվածներ մամուլում շրջանառվում էին և անցյալում, հրատարակվելու են նրանք և ապագայում: Եվ ոչ միայն ընդդիմադիր մամուլում: Քանի որ, երբ խոսքը գնում է մեծ հասարակական նշանակություն ունեցող սոցիալ-տնտեսական խնդրի մասին, ապա հասարակական կարծիքի և պետական շահերի հատումը չի կարող բացասական ձևով ազդել առկա խնդիրների լուծմանը: Հակառակը՝ լուծում կայացնում են միայն պետական և հասարակական շահերից ելնելով:

Բայց առկա է նաև այլ հատում: Խուլ խաչմերուկ կամ խուլ հատում՝ երկաթուղային տերմին է, որը նշանակում է երկաթուղային գծերի հատում առանց սլաքների, ինչը բացառում է շարժակազմի անցումը մեկ գծից մյուսը: Խուլ հատումը հանդիսանում է պոտենցիալ վտանգավոր, քանի որ այստեղ հնարավոր է գնացքների բախում:

Այսօրվանից հետո կարող ենք անցնել մեր բուն թեմային: Իսկ ավելի ճիշտ բացատրել հնարավոր բախումները «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ մասին խոսելիս, որի գործունեությունն այսօրվան հուզում է նշված թերթին ու կայքին:

Ամեն մեկը գրում է, ինչպես որ շեշտում է: Իսկ այդ շեշտը լավ գզում է աղբյուրական մամուլը, մասնավորապես հակահայկական vesti.az-ը: Աղբյուրական մամուլը ընթերցելը կասկածելի հաճույք է, սակայն դա լրագրողական աշխատանքի մասն է: Աղբյուրական-դարաբարյան հակամարտության և բանակցային գործընթացի հետ կապված թեմաներից բացի, նրանց մոտ մեծ էրատագ է առաջանում նաև մեր ազգային անվտանգության, տնտեսության, հիմնական ընկերությունների հետ կապված հայկական ՁԼՄ-ների նեգատիվ հրատարակումները: Այնպես որ որոշ հայ լրագրողների «թեմայի ուսուժանախորհուրդները» նրանք նույնպես ձևավորվեցին և օգտագործվեցին ի ժամանակ: Իսկ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին վերաբերվող բոլոր հոդվածները ուղղեցին հակառուսական քաղաքականության տիրույթ:

Այս հարցի շուրջ մենք գրուցեցինք «ՀԿԵ» ՓԲԸ հասարակականության հետ կապերի բաժնի պետ Վարդան Այվաչյանի հետ:

— Վերջերս «Ժամանակ» թերթը գրել էր, որ ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարությունը ստուգում էր և անցկացրել էր էլեկտրագնացներում, բացահայտել առանց տուն 150 ուղևոր, իսկ դա նշանակում է, որ դուք միտումաշար նվազեցնում եք ուղևորների թիվը և փոխհատուցում ստանում կառավարությունից: Եվ քաջաբանված չէ՝ երբ սկսեցի:

— «Նոր սկանդալ», «Հեղձական սկանդալ», «Աղմուտ սկանդալ»: Դրանք բավականին տպավորիչ վերնագրեր: Իսկ 1.5 տարի առաջ նույն թերթը գրել էր, որ ՀԿԵ-ն մի տարի հետո կփլուզվի և Հայաստանը կմտա առանց երկաթուղի: Եվ ի՞նչ: Ի՞նչպես պիտի արձագանքեր մեր ընկերությունը նման «հավաստի փաստերին», ապացուցեր, որ մենք չենք փակվում:

Նախարարությունը ոչ մի նման ստուգում մեր մոտ չէր անցկացնում: Ստուգումներն իրականացնում էր մեր իսկ Անվտանգության ծառայությունը Ուղևորափոխադրումների տնօրինության հետ համատեղ: Աշխատանքը պլանային էր, ստուգվում էր տոմսերի գանձապահների աշխատանքը: Բացահայտվեցին առանց տոմսերի ուղևորներ, և դա մենք չենք թաքցնում:

Իսկ ուղևորների հոսքը չի պակասել: Տեղական հաղորդակցությունում 2016 թվականին փոխադրվել է 298,9 հազար ուղևոր, այս տարի կլինի ոչ պակաս ցուցանիշ: Միջազգային հաղորդակցությունում ուղևորների թիվը միայն աճում է՝ 2015 թվականին 43 148 ուղևոր, 2016-ին՝ արդեն 53 161, իսկ այս տարվա 9 ամիսների ընթացքում 56 464:

Իսկ ինչ վերաբերվում է Հայաստանի կառավարության կողմից արամադրվող սուբսիդիաներին, մանրամասնում: Գրեթե ամբողջ աշխարհում ուղևորափոխադրումները, ավելի ճիշտ՝ մերձ-քաղաքային ուղևորափոխադրումները, իրականացվում են փաստերով, որոնք և փոխհատուցվում են պետության կողմից:

Փոխադրումների ծավալը, երթուղիները, չվերթների քանակը մենք համաձայնեցնում ենք ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության հետ: Կարելի է համարել, որ դա երկաթուղային ուղևորափոխադրումների պետապատկեր է: Վնասների մասնակի փոխհատուցում իրականացվում է 2008 թվականին կնքված կոնցեսիոն պայմանագրի համաձայն:

Բացի այդ, ՀԿԵ-ն Հայաստանի խոշոր հարկ վճարողներից է 2008

թվականից մենք երկրի պետությունը վճարեցինք ավելի քան 37,8 մլրդ դրամ, ինչը գերազանցում է Հայկական երկաթուղու ժամանակ վճարված հարկերի քանակը: Միջինում տարեկան մենք վճարում ենք 3,7-3,8 մլրդ դրամ, իսկ Հայկական երկաթուղին վճարում էր տարեկան 1,4 մլրդ դրամ:

— Պետում են, որ դուք փաստվ եք աշխատում նաև բեռնափոխադրումների ոլորտում, քանի որ սակագներն արհեստական բարձր են և հաճախորդները գերադասում են փոխադրումներն իրականացնել ավտոտրանսպորտով, աշխատում եք փաստվ, բայց բարձրացրել եք 23 պետերի աշխատավարձերը:

— Եթե նման հրատարակումների հեղինակները՝ իրենց անհասկանալի աղբյուրների վրա հույս դնելուց բացի, գտնեն մեկ անգամ դիմելի մեզ կամ Տրանսպորտի նախարարություն, նման անհեթեթություն չէր հրատարակվի թերթում:

Առաջինը մենք կատարում և գերակատարում ենք մեր ծրագրերը, աշխատում ենք շահույթով՝ ոչ այդքան մեծ, ինչպես ցանկալի է, բայց շահույթով:

Երկրորդը բեռնափոխադրումների սակագները նույնիսկ անցած տարիներին մեր մոտ ավելի էժան էին, քան հարևան Վրաստանում: Իսկ այս տարվա փետրվարին ՀԿԵ-ն գնել էր նավահանգիստ Կավկաս-Փոթի երթուղում գործող լաստանավի բոլոր տեղերը, ինչի շնորհիվ դեպի Հայաստան և Հայաստանից վազմեն երա՞վ իրականացվող բեռնափոխադրումների սակագները նվազել էր 2-3 հազար դրամով:

Դրանից հետո՝ Վրացական երկաթուղու և Ռուսական երկաթուղիներ ԲԲԸ-ի հետ աշխատանքի շնորհիվ մեզ տրամադրվեցին մեծ գեղջեր: Օրինակ, Ռուսաստանի տարածքում այն կազմում է 50%, իսկ Վրաստանում՝ մինչև 50%: Այնպես որ, մեր սակագները լիովին համարելի են ավտոտրանսպորտի գների հետ:

Աշխատավարձեր մենք չենք բարձրացրել: Ոչ դե-կավարությունը, ոչ շարքային աշխատողներին: Սակայն աշխատավարձը ստանում ենք ժամանակին և պարզ-զևարումներով:

Ի դեպ, վերջերս ՌԻԳայում կայացած ԱՊՀ երկրների երկաթուղային տրանսպորտի հարցերով խորհրդի նիստին հրատարակվեցին մասնակից երկրների երկաթուղայինների աշխատավարձերի չափերը: Հայաստանի երկաթուղայինների աշխատավարձերը ավելի բարձր են, քան Վրաստանում, Աղբյուրում, Մոլդովայում, Ուկրաինայում:

— Իսկ ի՞նչ կասեք Մեծամորի ԱԷԿ-ում երկաթուղային գծերի վերանորոգման համար հայտարարված մրցույթի վերաբերյալ: Թերթը պնդում է, որ մրցույթը կասկածելի էր, այս հարցով սկսել են հետաքրքրվել նաև իրավապահները, հնարավոր է, որ քրեական գործ հարուցվի:

— Չեմ զարմանա, եթե իրավապահները իրոք հետաքրքրվում են այս մրցույթով: Ի՞նչպես եղավ, որ հաղթող ճանաչվեց ոչ թե մասնագիտացված ընկերություն ՀԿԵ-ն, այլ անհայտ ՄՊԸ-ն: Չէ, որ դա շրջանային բանջարեղենի պահեստի համար գույքարանի թուղթ՝ մասնակարարելու մրցույթ չէ:

Այս ճանապարհով պիտի գնան պետական նշանակություն ունեցող, կարևոր, ոչ գաղափարային բեռներ ատոմակայանի արդիականացվող շահակտորի համար: Սակայն մրցույթը հայտարարել ենք ոչ թե մենք, այլ Մեծամորի ԱԷԿ-ի տնօրինությունը: Այնպես որ, մեքադրանքները սխալ հասցեով են:

— Եվ վերջին հարցը: Ձեզ չի թվում, որ հոդվածների վերնագրերում «առասական թալան», «առաները թալանում են Հայաստանի ջրուցներ» երևում է...

— Ես հասկացա ձեզ: Բայց դա արդեն քաղաքական տիրույթ է, իսկ երկաթուղայինները քաղաքականությունով չեն զբաղվում: Ասեմ միայն, որ ՀԿԵ-ի գործունեության տարիների ընթացքում կառուցվել և շահագործման են հանձնվել 3 հիմնական երկաթուղային կամուրջներ, վերանորոգվել է 38 կամուրջ, 450 կմ գիծ, 70 սլաքային փոխադրիչ, 342 կմ կոնտակտային ցանց, 52 գծանց, փոխվել 820 հազար կմ: Եթե 2008 թվականին գրանցվել էր ուղևորից գնացքի դուրս գալու 260 դեպք, ապա 2009-ին՝ արդեն 93, իսկ 2015 թվականին՝ միայն 2:

Կարելի է երկար խոսել մեր աշխատանքի մասին: Բայց բավարարվեմ կարճ տեղեկանքով՝ 9 տարիների ընթացքում

երկաթուղային եթթակառուցվածքի և շարժակազմի արդիականացմանը ՀԿԵ-ն ներդրել է 253 մլն դոլար՝ մինչև 2038 թվականը նախատեսվող 520 մլն դոլարից:

Դա վարկային միջոցներ չեն, Հայաստանը դրանք չի վերադարձնի: Ու եթե «Ժամանակ» թերթի խմբագրությունը համարում է դա «առասական թալան»՝ Աստված նրանց հետ...

<http://armworld.am/detail.php?paperid=5688&pageid=170896&lang=>
<http://iravunk.com/news/43166>

Ընորհավորում ենք մեր հոբեյարներին

Նայեմքեր

01.11. Մովսիսյան Անդրանիկ Լևոնի
«Վառձոր» գծային-կայարանային միավորման Մլավերդի-Մանանիկ հենակետային կայարանի պետ

03.11. Եղիազարյան Կարինե Մարգարի
Մվտոմատիկայի, տեղեմխանիկայի և կապի Ձեռնարկություն առաջատար հաշվապահ

08.11. Խաչատրյան Լիզվարդ Այսոշայի
Մվտոմատիկայի, տեղեմխանիկայի և կապի Ձեռնարկություն հեռախոսավարուհի

12.11. Պողոսյան Մլավիկ Կոչոյանի
Էլեկտրաֆիկացիայի և էներգամատակարարման Ձեռնարկություն էլեկտրամեխանիկ

15.11. Ոսկանյան Ռոբերտ Հրաչի
Էլեկտրաֆիկացիայի և էներգամատակարարման Ձեռնարկություն հեթթապահ էլեկտրամեխանիկ

18.11. Հակոբյան Հովհաննիս Գրիգորի
Հաշվապահական և հարկային հաշվառման ծառայություն առաջատար հաշվապահ

20.11. Մարիսով Վլադիմիր Գևորգի
Երևանի գծի ուղեմասի գծի մոնտոր

29.11. Արշակյան Աշոտ Հովհաննիսի
Գյումրիի վագոնային դեպոյի շարժակազմի վերանորոգման գծով փակահագործ

Դեկտեմբեր

02.12. Ղալումյան Վարդան Աշոտի
«Երևան» գծային-կայարանային միավորման Կարմիր-Բլուր կայարանի պետ

03.12. Մարադյան Տիգրան Վանիկի
Մվտանգության ծառայության տեղեմխանիկայի պետ

04.12. Բաղդասարյան Մամիկ Մանվանի
Մվտոմատիկայի, տեղեմխանիկայի և կապի Ձեռնարկություն էլեկտրամեխանիկ

15.12. Եսայան Անահիտ Մպարտալի
Հաշվապահական և հարկային հաշվառման ծառայություն առաջատար հաշվապահ

22.12. Հովհաննիսյան Հրայր Մարտիրոսի
Գյումրիի վագոնային դեպոյի շարժակազմի վերանորոգման գծով փակահագործ

22.12. Մկրտչյան Մերյոմ Մլավիկի
«Վառձոր» գծային-կայարանային միավորման պետի Ժ.պ.


22.12. Խաչատրյան Համիկ Կարապետի
Երևանի գծի ուղեմասի գծանցի հեթթապահ

26.12. Ալյան Արթուր Հենրիկի
Մվտանգության ծառայության ավագ հրամիք

28.12. Գրիգորյան Արամ Մերուհի
Երևանի գծի ուղեմասի գծի մոնտոր

29.12. Գրիգորյան Գալինա Գրիգորի
Երևանի գծի ուղեմասի գծանցի հեթթապահ

30.12. Հարությունյան Համիկ Գրիգորի
Մվտոմատիկայի, տեղեմխանիկայի և կապի Ձեռնարկություն առաջին կարգի հաշվապահ

Հայաստանի ԵՐԿԱՅՈՒՂԱՅԻՆ  ՀԿԵ ՓԲԸ-ի կորպորատիվ ամսաթերթ	Խմբագրական խորհուրդ Համարի պատասխանատու՝ Վարդան Ալոյան Լուսանկարները՝ Հարություն Լազարյանի Սրբագրիչ՝ Սամվել Սահակյան	Խմբագրության հասցեն՝ ՀՀ, Երևան, Տիգրան Մեծի պող. 50 Հեռ.՝ (010) 57-50-02 Էլ. փոստ՝ pr@railway.am, ukzhdpressoffice@inbox.ru	Ծավալը՝ 2 տպագրական մամուլ Տպաքանակը՝ 800 օրինակ Ստորագրված է տպագրության՝ 08.01.2018թ. Տպագրված է «Լիոն Փրինթինգ Սերվիս» ՍՊԸ տպարանում
--	--	---	--



Локомотив вашего бизнеса

ЖЕЛЕЗНОДОРОЖНИК

www.ukzhd.am

АРМЕНИИ

Газета
ЗАО ЮКЖД

11 (58)

НОЯБРЬ-ДЕКАБРЬ, 2017

Уважаемые коллеги!

Сердечно поздравлю вас с наступающим Новым годом и Святым Рождеством! Традиционно с новым годом связывают новые ожидания, новые планы, ждут положительных изменений и приятных, радостных событий.

Прошедший год для железной дороги Армении был полон напряженной работы, он был трудным, но железнодорожники сумели успешно поработать и добиться намеченных целей. Насколько успешным будет для ЮКЖД будущий год, зависит только от нас, от нашей упорной работы.

2018 год для нас будет особенным – он юбилейный, ведь ровно 10 лет назад Южно-Кавказская железная дорога начала работать в Армении и развивать систему железнодорожного транспорта республики.

Уважаемые коллеги!


Хочу поблагодарить вас за добросовестную работу!

Искренне желаю вам и вашим семьям счастья, здоровья, радости в новом году! Пусть этот год станет для вас временем достижений и новых свершений, успеха, благополучия и процветания.

С уважением,

Генеральный директор ЗАО «ЮКЖД»

Сергей Валько



На ЮКЖД подвели итоги работы в 2017 году



Генеральный директор ЗАО «Южно-Кавказская железная дорога» Сергей Валько на состоявшемся 28 декабря селекторном совещании подвел итоги работы железной дороги в 2017 году. Как отметил С.Валько, год был насыщенным на события, среди наиболее значимых выделяются, в частности, активизация железнодорожно-паромных перевозок, завершение программы поэтапного восстановления системы электрической централизации на станции Кармир Блур, тестирование нового электропоезда, который в настоящее время приводится в соответствие с условиями эксплуатации в Армении. Также было реализовано множество благотворительных проектов: реконструирован дом бывшего начальника восстановительного поезда Гюмри, Почетного железнодорожника, ветерана труда 90-летнего Грача Арутюняна, который проработал на железной дороге 64 года; продолжилось оказание помощи школе села Фиолетово.

«В текущем году мы работали в сложных условиях жесткой конкуренции с автотранспортом. Были предприняты меры по привлечению на железную дорогу новых объемов грузов, положительный эффект имела и активизация работы парома порт Кавказ-Поти», - сказал руководитель ЮКЖД, отметив, что с февраля по декабрь 40 компаний перешли с автомобильного на железнодорожный транспорт.

Так, по данным статистики, в течение года железнодорожным транспортом перевезено более 2,6 млн тонн грузов, что на 0,4% выше

запланированного показателя, грузооборот по сравнению с прошлогодними показателями вырос на 4%, перевозки в экспортном сообщении увеличились по сравнению с запланированным показателем на 5,7%, с 2016 годом – на 9,4% (или 32 тыс тонн), а импортные – на 5% и 4% соответственно. При этом средний вес поезда по сравнению с прошлым годом увеличился на 0,5%, среднесуточный пробег локомотива – на 1%, а его производительность – на 2,9%. Участковая скорость выросла по сравнению с прошлогодними показателями на 1,7%, а техническая – на 2,7%.

Вместе с тем Сергей Валько констатировал необходимость улучшения таких показателей работы железной дороги как, в частности, статнагрузка, эксплуатируемый парк электровагонов и грузовых вагонов, расход электроэнергии на тягу поездов.

В течение года по железной дороге проследовало 12 835 поездов, из которых 12 686 – по расписанию. Сергей Валько отметил улучшение графиков движения пассажирских и грузовых поездов и поручил продолжать работу в направлении последовательного улучшения выполнения графика движения поездов. При этом рост пассажироперевозок в межгосударственном сообщении по сравнению с прошлым годом составил 12%.

